

# ԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# Լրատու

ՀՈՒՆԻՍ 25 - ՀՈՒՆԻՍ 5 2015 Թ. ԹԻՎ 16 (2071)

ՏԱՍԵՐՅԱ ԹԵՐԹ ՀՐԱՏԱՐԱՎՎՈՒՄ Է 1951 Թ. ԳԻՆԸ՝ 120 ԳՐԱՍ

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ



### Իրականացվող ծրագրերը պարենային անվտանգության խնդիր են լուծում

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն աշխատանքային այցով մեկնել է Շիրակի մարզ՝ դիտարկելու սերմնաբուծության և սերմնարտադրության, օրգանիկ այգիների հիմնման պետական ծրագրերի արդյունքները:

Նախարարը, Շիրակի մարզպետ Ֆելիքս Յուլյանյանի ուղեկցությամբ, եղել է Մարմարաշեն համայնքի բնակիչ Կարեն Արշակյանի տնտեսությունում: 2011 թվականին, ՀՀ գյուղատնտեսության նախարարության և «Թամարա Ֆրութ» ընկերության հետ կնքված եռակողմ պայմանագրով, ֆերմերը 3 հեկտար ազնվամորու օրգանիկ տնկարկ է հիմնել, անցկացրել է կաթիլային ոռոգման համակարգ: Այժմ բերքատվությունից գոհ է, մեկ հեկտարից մոտ 1,5 տոննա ազնվամորու է ստանում, «Թամարա Ֆրութի» հետ բերքի մթերման 8 տարվա պայմանագիր ունի: Նախարարը գյուղատնտեսին հորդորել է՝ ավելացնել ազնվամորու մշակության տարածքները: Կարեն Արշակյանը նաև շայլամաբուծությամբ է զբաղվում: Նույն համայնքի ֆերմեր Ալեքսան Մարկոսյանը ցորենի սերմնաբուծության և սերմնարտադրության զարգացման ծրագրի շահառուներից է, նրան այս տարի հատկացվել է 2,1 տոննա աշխատանքային «վարսա» սորտի էլիտային վերարտադրության սերմացու: Ստացված սերմացուի հաշվին, ֆերմերն այս տարի մոտ 7 հեկտարի վրա ցանք է կատարել, բերքից գոհ է, մեկ հեկտարից շուրջ 8 տոննա բերք է ակնկալում:

Նախարար Սերգո Կարապետյանը ցորենի ցանքատարածություններում շրջելուց հետո, այցելել է «Գյուլբերի սելեկցիոն կայան»: Տնօրեն Ռուբիկ Կարախանյանի տեղեկացմամբ, այստեղ 170 հեկտար տարածքի վրա հացահատիկային մշակաբույսեր են աճեցվում, որից՝ 95 հեկտարը կազմում են աշխատանքային ցորենի, իսկ 75-ը գարնանացան գարու ցանքատարածությունները:

### Հանրապետությունից օրական շուրջ 1000 տոննա ծիրան է արտահանվում

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը, թարմ պտուղ-բանջարեղենի արտահանման գործընթացի կազմակերպման աշխատանքները դիտարկելու նպատակով, այցելել է «Սպայկա» ընկերություն, ինչպես նաև Արարատի մարզի Ներքին Դվին, Աբովյան և Ջրաշեն համայնքներ:

Այգրում նախարարը, «Սպայկա» ընկերության տնօրեն Դավիթ Ղազարյանի ուղեկցությամբ, շրջել է ընկերության սառնարանային տնտեսություններում, հետևել ծիրանի բեռնման գործընթացին: Ընկերության նախագծերի կառավարման բաժնի ղեկավար Կարեն Բաղդասարյանի տեղեկացմամբ՝ ընթացիկ տարին առանձնանում է առատ բերքով, և ընկերությունը նախատեսում է մինչև տարեկան 20 հազար տոննա թարմ պտուղ-բանջարեղեն: Այնուհետև նախարարը մեկնել է Արարատի մարզի Ներքին Դվին համայնք, որտեղ՝ մարզպետ Ռուբիկ Աբրահամյանի ուղեկցությամբ, եղել է ֆերմեր Գևորգ Նազարյանի ծիրանի այգիներում, որոնց ընդհանուր տարածքը կազմում է 5 հեկտար: Նա նշել է, որ անձամբ է զբաղվում իր այգու բերքի արտահանմամբ, ինչի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնությունում արդեն կան համապատասխան պայմանավորվածություններ: Գոհունակություն հայտնելով այս տարվա ծիրանի բերքի քանակից և որակից՝ ֆերմերը հույս է հայտնել, որ ընթացիկ տարվա ծիրանի բերքը կկազմի մոտ 60-70 տոննա:

Նախարարի հաջորդ կանգառը՝ Ջրաշեն համայնքում էր, որտեղ 3 հեկտար հողատարածքում ծիրանի մշակությամբ զբաղվող ֆերմեր Գրիգոր Վարդանյանը հայտնել է, որ ակնկալում է արտահանել մոտ 10 տոննա ծիրան: Այցելած համայնքներում գյուղացիները, նախարարի հետ զրույցում, նշել են, որ գոհ են նաև ծիրանի մթերման գնից՝ 1 կիլոգրամը հենց այգում գնվում է 450-500 դրամով:

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

### Ուշադրություն

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը զգուշացնում է, որ հանրապետությունում ջերմաստիճանի կտրուկ բարձրացման պատճառով, անտառային և հարակից տարածքներում մեծացել է հրդեհների առաջացման և տարածման վտանգը:

Համայնքների սեփականություն հանդիսացող ցանքատարածքներն ու արտավայրերը բուսական մնացորդներից մաքրելու նպատակով, ազգաբնակչության կողմից կատարվող հրկիզումները շատ հաճախ տարածվում են անտառային տարածքներ՝ մեծ վնաս պատճառելով բնությանը և շրջակա միջավայրին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանրապետության մի շարք մարզերում (մասնավորապես՝ Արմավիր, Արարատ, Սյունիք, Արագածոտն, Տավուշ) սկսվել է հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքը՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը հորդորում է՝ առանձնակի զգուշություն ցուցաբերել այդ աշխատանքներն իրականացնելիս՝ հիշեցնելով, որ «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ



օրենքի համաձայն՝ արգելվում է այրել խոզանները, բուսական մնացորդներով ու չորացած բուսականությամբ տարածքները, արտավայրերի ու խոտհարքների բուսականությունը գյուղատնտեսական, անտառամերձ, անտառային ու բնության հատուկ պահպանվող հո-

ղերում:  
ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը տեղեկացնում է նաև, որ արգելվում է անտառային տարածքներում՝

1. կրակ վառել,
2. վառվող լուցկի կամ ծխախոտի մնացորդ գցել,
3. յուղերով կամ բենզինով ներծծված լաթեր թողնել,
4. ներքին այրման շարժիչների աշխատանքի ժամանակ մեքենան վառելիքով լցավորել, ինչպես նաև՝ ծխել լցավորվող մեքենաների մոտ:

հարույկ կամ կրակ թույլատրվում է վառել միայն դրանց համար նախատեսված վայրերում՝ վերջում հանգցնելով այն: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ գործող օրենսդրությամբ քրեական և առանձնապես խոշոր չափերի հանցող նյութական պատասխանատվություն է սահմանված ինչպես դիտավորությամբ, այնպես էլ՝ անզգուշությամբ անտառային տարածքներին վնաս պատճառելու համար:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հայաստան» ՊՈԱԿ-ը հրդեհավտանգ անտառտարածքներում սահմանել է շուրջօրյա հսկողություն:

Անտառային հրդեհների ծագման դեպքում, հորդորում ենք անմիջապես զանգահարել ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության 911 հեռախոսահամարով կամ «Հայաստան» ՊՈԱԿ՝ հետևյալ հեռախոսահամարներով՝ ժամը 9<sup>00</sup>- 18<sup>00</sup>՝ 65-01-24, 65-47-28, իսկ 18<sup>00</sup>- 21<sup>00</sup>՝ 077999991, 093401112 և 093715858 /բջջ.:/:

Անտառը պահպանության կարիք ունի	Էջ 2
Նաջողության գրավականը՝ համախմբվածությունն է	Էջ 5
Մասնագետի խորհուրդը	Էջ 7



ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ

Իրականացվող ծրագրերը պարենային անվտանգության խնդիր են լուծում

Օգտագործվում են ինչպես տեղական, այնպես էլ ներկրված սորտեր: «Գյումրիի սելեկցիոն կայանի» տնօրենի հավաստմամբ, այս տարի, Նախորդ տարվա համեմատությամբ, բերքատվությունը 20-25 տոկոսով ավելի կլինի: Նախարարի պահանջն է՝ գյուղացիական տնտեսություններին ապահովել որակյալ, բարձր վերարտադրության, սերմացուներով: Նախարարը գոհունակություն է հայտնել ծրագրերի արդյունքներից՝ շեշտելով, որ այս տարի ցորենի ցանքատարածություններից բարձր երաշխավորված բերք է սպասվում:



«Իրականացվող ծրագրերի շնորհիվ, մենք կարողանում ենք նաև երկրում պարենային անվտանգության խնդիր լուծել. եթե ցորենի ինքնաբավության մակարդակը հանրապետությունում 2010 թվականին 33 % էր կազմում, ապա 2014 թվականին այդ ցուցանիշը հասավ 52 %-ի, իսկ արդեն 2020 թվականին մենք նպատակ ունենք 65 % ինքնաբավություն ապահովել»,- նշել է գյուղատնտեսության նախարարը: Նախարարի խոսքով՝ հանրապետությունում մշակվող հողատարածությունները 2010 թվականին կազմում էին 62 %, ապա այժմ այդ ցուցանիշը հասել է 74 %-ի: Նա նաև հավելել է, որ ընթացիկ տարում արդեն լրացուցիչ մշակվել է մոտ 17 300 հեկտար հող, և ընդհանուր վարելահողերի տարածքը հասել է 78 %-ի, ընդ որում Շիրակի մարզում մշակվում է ընդհանուր ցանքատարածությունների 84 %-ը, որը դրական ցուցանիշ է:

Հանրապետությունից օրական շուրջ 1000 տոննա ծիրան է արտահանվում

Ըստ Սերգո Կարապետյանի՝ ընթացիկ տարում գոհացուցիչ են ոչ միայն ծիրանի արտադրության, այլև արտահանման ծավալները: «Հանրապետությունից օրական շուրջ 1000 տոննա ծիրան է արտահանվում, և արդեն իսկ արտահանվել է 5500 տոննա: Այս տա-



րի Ուզբեկստանում, որը Ռուսաստանի Դաշնություն ծիրանի մեծածավալ արտահանումներ էր իրականացրում, բերքը ցրտահարվել է, և հայկական ծիրանը ռուսական շուկայում շատ ավելի մեծ պահանջարկ ունի», - նշել է Նախարարը: Նախարարի խոսքով՝ ընդհանուր առմամբ, այս տարի Հայաստանից արտահանվել է շուրջ 30 հազար տոննա թարմ պտուղ-բանջարեղեն՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 24 300 տոննայի դիմաց:

Նախարարը նաև տեղեկացրել է, որ մի քանի օրից մթերող ընկերություններում կսկսվի ծիրանի մթերման գործընթացը: Գոհունակություն հայտնելով նաև մարզի ընդհանուր ցուցանիշներից՝ Սերգո Կարապետյանը նշել է, որ մարզն այս տարի շուրջ 1000 հեկտարով ավելացրել է ցանքատարածությունների մշակությունը՝ հասցնելով 24 հազար հեկտարի: Ներկայումս մշակվում է մարզի վարելահողերի 91 տոկոսը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

Սևանա լիճ է բաց թողնվել 43 հազար գեղարքունի և ամառային իշխանի մանրածուկ

«Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման» հիմնադրամի և Սևանա լճում իշխանի վերականգնման ծրագրի շրջանակներում, ցանցավանդակային պիլոտային աշխատանքներ իրականացնող «ԷՄԻ ՖՈՒՐ» ՍՊԸ-ի կողմից մանրածուկ անհատույց տրամադրման գործընթացի շրջանակներում, ՀՀ բնապահպանության նախարարի հրամանով վերջերս ձևավորված հանձնաժողովի հսկողության ներքո, Սևանա լիճ առաջին անգամ արտահերթ բաց է թողնվել 43 հազար գեղարքունի և ամառային իշխանի մինչև 30 գրամ կշռող մանրածուկ:

Բացթողնման աշխատանքներին հետևել են ՀՀ Նախագահի գլխավոր խորհրդական Արամ Ղարիբյանը, ՀՀ բնապահպանության նախարար Արամայիս Գրիգորյանը, ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը, «Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման» հիմնադրամի գործադիր տնօրեն Արշակ Աղաջանյանը և այլ կազմակերպությունների ու հարակից համայնքների ներկայացուցիչներ: ՀՀ բնապահպանության



Նախարարը, կարևորելով միջոցառումը, հայտարարել է. «Քանի որ Սևանում իրականացնում ենք շատ կարևոր ծրագիր, ուստի «Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման» հիմնադրամի հետ նպատակահարմար գտանք և առաջնային որոշում կայացվեց, այն է՝ ձկան պաշարների ավելացման ծրագիրն ավելի վաղ սկսել՝ մինչև «Սևանի իշխան» ՓԲԸ-ի կողմից գործարանի կառուցումը: Առաջիկայում, եթե մենք կարողանանք բացթողումներ իրականացնել՝ ըստ նախատեսվածի, ևս մի քանի տարի, ապա այն թույլ կտա հետագայում հստակ խոսել Սևանում արդյունագործական ձկան պաշարների մասին և լուծել արդյունագործական ձկան որսի խնդիրը: Նշեմ, որ «Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման» հիմնադրամը նպատակահարմար է գտել, այս տարի ևս, 200-300 հազար մանրածուկ բաց թողնել Սևանա լիճ: Բնապահպանության նախարարը ևս մեկ անգամ դիմել է ազգաբնակչությանը, որպեսզի բնապահպանության նախարարության կողմից հաստատված Սևանում որսի արգելքի ժամանակահատվածում՝ ձկան ձկադրման ժամանակ զերծ մնան ձկնագողությունից, որպեսզի հետագայում հնարավոր լինի խոսել արդյունագործական որսի մասին:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը, խոսելով ծրագրի սոցիալական բաղադրիչի մասին, հայտնել է, որ այն թույլ կտա մարզում ստեղծել շուրջ 5 հազար աշխատատեղ:

«Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման» հիմնադրամի գործադիր տնօրեն Արշակ Աղաջանյանը նշել է, որ Սևանում իրականացվելու են ոչ միայն ձկան բացթողման, այլ նաև բնապահպանական այլ ծրագրեր: Մասնավորապես՝ կատարվելու են գետերի հունների մաքրման աշխատանքներ, որպեսզի ձուկը կարողանա բնականոն ձևով ձկադրել ու վերարտադրվել: Սևանում կառուցվելու են մաքրման կայաններ: ՀՀ բնապահպանության նախարարի հրամանով՝ ՀՀ ԲՆ բնապահպանական պետական տեսչությանը և «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին հանձնարարվել է մանրածուկ բացթողնման վայրերում կազմակերպել շուրջօրյա հսկողություն:

ՀՈՐԵԼՅԱՆ

ԱԿԱՆԱՎՈՐ ԳԻՏՆԱԿԱՆԸ

Նրա գործերն ամբողջացնում և ներկայացնում են հայրենիքի և գյուղատնտեսության զարգացման անսահման նվիրված, իր գործի կարևորության գիտակցումով ոգևորված մարդու դիմանկարը: Օրերս լրացավ առաջատար գիտաշխատող, Ռուանդա Հայկի Ղազարյանի ծննդյան 75 և աշխատանքային գործունեության 45 ամյակը:



Ծնվել է 1940 թ., Էջմիածին քաղաքում: 1963 թ. ընդունվել է Մոսկվայի Կ. Տիմիրյազևի անվան գյուղատնտեսական ակադեմիա, այնուհետև տեղափոխվել և 1968 թ. ավարտել է Երևանի գյուղատնտեսական ինստիտուտի ագրոնոմիական ֆակուլտետի ագրոքիմիայի և հողագիտության բաժինը, 1973 թ.՝ Երկրագործության գիտահետազոտական ինստիտուտի ասպիրանտուրան:

Գյուղատնտեսական գիտությունների թեկնածու է: 1995 թ. օգոստոսից Երկրագործության գիտական կենտրոնի սերմաբուծության բաժնի վարիչն է: 1999-2014 թթ. «ԻԿԱՐԴԱ» միջազգային կազմակերպության կողմից նշանակվել է հանրապետությունում հատկապես հողագիտության մշակութային գծով ազգային կոորդինատոր: Համագործակցում է ՍԻՄՄԻՏ միջազգային կազմակերպության հետ:

Մասնակցել և զեկույցներով հանդես է եկել կազմակերպված գիտաժողովներին: Հրատարակել է ավելի քան 80 գիտական հոդվածներ, մենագրություններ, ձեռնարկներ, գիտահանրամատչելի բազմաթիվ հոդվածներ:

Ռ. Ղազարյանը լուրջ աշխատանքներ է տարել աշխատանքային գործերի հայկական սորտերի գենոֆոնդի պահպանման ուղղությամբ: Հեղինակ է՝ աշխատանքային գործերի՝ 11, սիսեռի՝ 9, սոյայի 2, ոլոռի 1 սորտ բարձր բերքատու սորտերի ստեղծմանը: Պետական արտադրության մասին է հանձնել աշխատանքային գործերի՝ 2, սոյայի, գետնանուշի և տրիտիկալիի մեկական սորտեր: Բազմիցս պարգևատրվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության պատվոգրերով և շնորհակալագրերով:

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը և Երկրագործության գիտահետազոտական կենտրոնը ջերմորեն շնորհավորում են անվանի ագրոնոմին՝ ծննդյան օրվա առթիվ, մաղթում քաջառողջություն, առավել մեծ ներդրում համակարգի հետագա զարգացման գործում:

ԽՈՐՀՐԳԱԿՅՈՒԹՅՈՒՆ

Անդառը պահպանության կարիք ունի

Մենք ապրում ենք լեռնային երկրում, որտեղ անտառածածկ տարածքները փոքր մաս են կազմում, և յուրաքանչյուրս պետք է հրդեհներից հեռու պահենք և պահպանենք մեր ազգային հարստությունը:

Քանի որ տարվա այս եղանակին հրդեհների վտանգը մեծանում է, գյուղատնտեսության նախարարության անտառային տնտեսության բաժինը, ԱԻՆ վարչությունը, մարզպետարանները, համագործակցելով միմյանց հետ, մարզերում իրականացնում են հակահրդեհային վիճակը կայուն պահելու կանխարգելիչ միջոցառումներ, ժողովներ:

Վերջերս Վայոց ձորի մարզում կայացավ հերթական այցը: Մարզում էին ՀՀ ԳՆ առաջին բաժնի պետ Գ. Ղամբարյանը, «Հայաստան» ՊՈԱԿ-ի տնօրենի խորհրդակցական Վ. Ավետիսյանը, տնօրենի տեղակալ Ա. Մանուկյանը, պահպանության և պաշտպանության բաժնի պետ Ա. Մանասերյանը, «Անտառային պետական մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ Ա. Խուրշուդյանը: Խորհրդակցական ժողովին մասնակից էին փոխմարզպետ Ս. Թարվերդյանը, մարզի պետական կառուցների տնօրեններ, ներկա-



**ՀԱՍՏՈՂՈՎ**

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ**

**Գյուղի և գյուղատնտեսության խնդիրների միասնական դիտարկումը հանրապետության կառավարության որդեգրած քաղաքականությունն է, որի նպատակն է՝ բարձրացնելով գյուղատնտեսության արդյունավետությունը՝ գյուղում զուգահեռաբար ստեղծել կյանքի համար բարենպաստ պայմաններ: Գյուղատնտեսությունը երկրի տնտեսության առանցքային ոլորտներից մեկն է, այդ են վկայում հետևյալ ցուցանիշները: 2014 թվականի տվյալներով՝ ոլորտում ձևավորվել է երկրի համախառն ներքին արդյունքի 19.7 %-ը: Ագրովերամշակող ոլորտի հետ միասին, մասնաբաժինը կազմել է 26.3 %:**

Գյուղատնտեսությունում զբաղված են հանրապետությունում ընդհանուր զբաղվածների 36.3 %-ը: Գյուղական բնակավայրերում բնակվում են հանրապետության բնակչության ավելի քան 36.0 %-ը: Տեղական արտադրության հաշվին, էներգետիկ արժեքով գնահատված, ապահովվում է առաջնահերթ անհրաժեշտ պարենամթերքների ինքնաբավության ավելի քան 60%-ը: Հանրապետության արտաքին ապրանքաշրջանառության մեջ, 2014 թվականի տվյալներով, գյուղատնտեսական ծագման արտադրատեսակների տեսակարար կշիռը կազմել է շուրջ 21.0 %, իսկ միայն արտահանման մեջ՝ 28.0 %:

Տնտեսական աճի ապահովման հետ մեկտեղ, կարևորագույն ձեռքբերումներից է ցանքատարածությունների ավելացումը և արդյունքում՝ վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակի բարձրացումը: Այդ ցուցանիշը 2014 թվականին կազմել է 74.4 %՝ 2010 թվականի 63.2 %-ի դիմաց: Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները՝ 2010-2014 թվականների ընթացքում, ավելացել են շուրջ 50.0 հազ. հեկտարով: Այդ միտումը շարունակվել է նաև ընթացիկ տարում: Ըստ օպերատիվ տվյալների՝ ցանքատարածությունները 2015 թվականին, նախորդ տարվա համեմատությամբ, ավելացել են շուրջ 17.0 հազ. հեկտարով և կազմել 350.0 հազ. հեկտար՝ վարելահողերի օգտագործման մակարդակը հասցնելով շուրջ 78.0 %-ի:

Դրական տեղաշարժեր են գրանցվել նաև անասնապահության ավելացման ուղղությամբ:

Գյուղատնտեսության արտադրության ծավալների ավելացումը հանգեցրել է երկրի համախառն ներքին արդյունքի մեջ ոլորտի տեսակարար կշռի որոշակի ավելացման: 2014 թվականին 3.4 % ՀՆԱ-ի հավելանքին նպաստման 1.5 տոկոսային կետը կամ 44.1 %-ը բաժին է ընկել գյուղատնտեսության ոլորտին: Նշվածի հետ մեկտեղ, ոլորտում առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնց լուծմանն են ուղղվում պետական աջակցության մի շարք ծրագրեր:

Հողային ռեսուրսների նպատակային օգտագործմանը, հացահատիկային տնտեսության զարգացմանը, ցորենի ինքնաբավության մակարդակի բարձրացմանն է ուղղվել «Ցորենի սերմանաբուծության և սերմարտադրության զարգացման» ծրագիրը, որի շրջանակներում, Ռուսաստանի Դաշնությունից ներկրված աշնանացան ցորենի բարձր վերարտադրության սերմացուներով, մատչելի պայմաններով,

բավարարվել է հանրապետության մարզերի ամբողջական պահանջարկը: Ծրագիրը շարունակվելու է նաև ընթացիկ տարում:

Հացահատիկային տնտեսության, կերարտադրության զարգացմանն է ուղղվել նաև 2011 թվականից իրականացվող՝ «Գարնանացանի համար գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնզանի արտադրության զարգացման» ծրագիրը: Վերջինիս շրջանակներում Ռուսաստանի Դաշնությունից ներկրված գարնանացան գարու, եգիպտացորենի, կորնզանի և առվույտի բարձր վերարտադրության սերմերով բավարարվել է հանրապետության մարզերի ամբողջական պահանջարկը՝ շուկայական գներից 50.0 %-ով ցածր գներով:

Ընդհանուր առմամբ, սերմնաբուծության, սերմապահովության բնագավառում իրականացված ծրագրերը նպաստեցին հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունների ավելացմանը, հացահատիկային տնտեսության ինտենսիվացման մակարդակի բարձրացմանը: Հացահատիկային մշակաբույսերի արտադրության ծավալները 2014 թվականին գերազանցեցին 2010 թվականի մակարդակը՝ 81.0 %-ով, իսկ բերքատվությունը բարձրացավ շուրջ 54.0 %-ով: Ցորենի արտադրության ծավալները, նշված ժամանակահատվածում, ավելացան ավելի քան 84.0 %-ով,



աշխատանքների համար մատչելի գներով հանքային պարարտանյութերի և դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության» ծրագրերը: Այդ ծրագրերի շրջանակում, մարզերի կողմից ներկայացված պահանջարկին համապատասխան, շուկայականից 40-50 % ցածր գներով, ներառյալ փոխադրման ծախսերը, տնտեսավարողներին մատակարարվել են ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութեր, ինչպես նաև՝ շուկայականից էականորեն ցածր գներով՝ դիզելային վառելանյութ:

Գյուղատնտեսության կայունության և մրցունակության բարձրացման համար կարևոր է համարվում վարկային ռեսուրսների մատչելիության մակարդակի բարձրացումը: Վերջինիս նպատակ է 2011 թվականից մեկնարկված «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագիրը:

Ծրագրի շրջանակներում, հանրապետության կառավարության կողմից հաստատված կարգին համապատասխան, ոլորտին տրամադրվում են մատչելի՝ 14 % տոկոսադրույքով, հայկական դրամով վարկեր, որի 6 տոկոսային կետը սուբսիդավորվում է պետության կողմից:

2011 թվականի ապրիլ ամսից մինչ օրս, գյուղատնտեսությունում տնտեսավարողներին տրամադրվել է 76 միլիարդ 600 միլիոն դրամ ընդհանուր գումարով, 88000 միավոր վարկ: Նշված ժամանակահատվածում վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ընդհանուր գումարը կազմել է 2 միլիարդ 824 միլիոն դրամ: 2015 թվականի համար ծրագրի առաջին փուլն ավարտական գործընթացում է, որի վարկավորման գումարը կազմում է 8 միլիարդ 200 միլիոն դրամ, երկրորդ փուլում՝ աշնանը նախատեսվում է ևս 7 միլիարդ դրամի վարկավորում:

Գյուղատնտեսության ոլորտում անասնաբուծության խթանմանն են նպաստել վերջին տարիներին իրականացվող մի շարք ծրագրեր: Մասնավորապես՝ «Տավարաբուծության զարգացման ծրագիրը»: Վերջինիս շրջանակներում, եվրոպական երկրներից հանրապետություն է ներկրվել շվից, հոլշտին և սիմենթալ ցեղերի շուրջ 2000 գլուխ տոհմային երինջ, որոնք մատչելի՝ տարածամկետ վճարման պայմանով, հատկացվել են հանրապետության անասնապահական

Է 4



իսկ բերքատվությունը՝ 52.4 %-ով: Ծրագրերի իրականացումն իր դրական ազդեցությունն ունեցավ ցորենի ինքնաբավության մակարդակի բարձրացման վրա: Այդ ցուցանիշը 2014 թվականի համար գնահատվում է 52.0 %՝ 2010 թվականի 33.5 %-ի դիմաց: Նախանշված է ցորենի ինքնաբավության մակարդակը 2020 թվականին հասցնել 65.0 %-ի:

Վերջին տարիներին իրականացվել է ներկայումս էլ շարունակվում են գյուղատնտեսությունում օգտագործվող հիմնական նյութական ռեսուրսների մատչելիության բարձրացման միջոցառումները: Դրան է ուղղվել «Հողօգտագործողներին գյուղատնտեսական

**ԽՈՐՀՐԳԱՎՅՈՒԹՅՈՒՆ**

**Անտառը պահպանության կարիք ունի**

2 Գ յաջուցիչներ, անտառամերձ համայնքների համայնքապետեր, լրատվության ներկայացուցիչներ:

Փոխմարզպետ Ս. Թարվերդյանը, ողջունելով ներկաներին, նշեց, որ հնարավոր ամեն քայլ պետք է կատարվի՝ հրդեհները կանխարգելելու համար. Վայք քաղաքի անտառների հրդեհի օրինակն աչքի առաջ ունենալով՝ հորդորեց համայնքապետերին՝ համայնք վերադառնալու պես, բնակչության շրջանում բացատրական աշխատանքներ տանել. «Յրդեհը չարիք է, պետք է իրազեկել հնձվորին, մեխակիզատորին, հովվին, դաշտում աշխատող գյուղացուն, էքսկուրսավարներին...», - նշել է փոխմարզպետը:

«Հայ անտառ» ՊՈԱԿ-ի պահպանության և

պաշտպանության բաժնի պետ Ա. Մանասերյանն իր զեկույցում ներկայացրել է վերջին տարիների հրդեհների դինամիկան, ըստ որի՝ տարեցտարի հրդեհների թիվն աճում է: Նա երախտագիտությամբ շեշտել է նաև համայնքապետերի և բնակիչների պատրաստակամ լինելու փաստը: 2015թ.-ին գրանցվել է հրդեհի 8 դեպք՝ 8 հա անտառածածկ տարաքի վրա, որոնցից 1 դեպք արձանագրվել է Վայոց ձորում՝ 3000 մ<sup>2</sup> տարածքով: «Անտառի, ծառի վերականգնումն ահավոր դժվար է, նամանավանդ, որ անտառածածկ տարածքներում առկա են նաև բուսական և կենդանական տեսակներ, որոնք գրանցված են «Կարմիր գրքում»: Յուրաքանչյուր ծառը կարևոր է մեզ համար և անտառների համար պատախանստու ենք բոլորս՝ և «Հայ անտառ»-ը, և «Անտառ տնտեսություն»-ը,-

ասել է Ա. Մանասերյանը: Սեմինարի մասնակիցները ներկայացրել են մի շարք խնդիրներ՝ կապված հանդամիջյան ճանապարհների անանցանելիության, հրշեջ մեքենաների համար անհրաժեշտ պահեստավորված ջուր չունենալու (մեծ տրամաչափի խողովակներով ծորակներ, ջրավազաններ, պոմպեր) վերաբերյալ: «Հայ անտառ» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ Ա. Մանուկյանը շեշտել է, որ այստեղ բարձրացված բոլոր խնդիրները զեկույցվելու են գյուղատնտեսության նախարար Ս. Կարապետյանին և հնարավորության սահմաններում լուծում են ստանալու:

Ա ԳՐԻԳՈՐՅԱՆ  
Վայոց ձորի ԳԱԿԿ



ՀԱՍՍՏՈՂՈՎ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

3

տնտեսություններին: Ստացվել են բարձր տոհմային և մթերատու հատկանիշներով օժտված, տեղի բնակլիմայական պայմաններին լավ հարմարվող բարձրարժեք տոհմային հորթեր: Մի շարք ընկերություններում ներկրված կենդանիներից տարեկան ստացվում է 7-8 հազար կգ կաթ, որը 3 անգամ գերազանցում է հանրապետության միջին ցուցանիշը: 2015 թվականին նախատեսվում է արտերկրից ներկրել 707 գլուխ տոհմային երինջ, որի առաջին խմբաքանակը՝ 257 գլուխը կներկրվի մինչև օգոստոսի վերջը:

Հանրապետությունում գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների տարածումը կանխարգելելու, մսի և մսամթերքի անվտանգությունն ապահովելու, ինչպես նաև՝ բնակավայրերում և ճանապարհատեղերում տարածքներում կենդանիների մորթը նվազագույնի հասցնելու նպատակով, ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից «Աջակցություն սպանդանոցների զարգացմանը Հայաստանում» ծրագրի շրջանակներում, հանրապետության 4 մարզի 5 համայնքում կառուցվել և շահագործման են հանձնվել սպանդանոցներ:

«Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրի շրջանակներում, յուրաքանչյուր տարի, իրականացվում է կենդանիների 8 վարակիչ հիվանդությունների կանխարգելման, կենդանիների և մարդու համար ընդհանուր հիվանդություններից ազգաբնակչության պաշտպանության, անասնահակահամաճարակային կանխարգելիչ տարեկան շուրջ 9.0 մլն միջոցառում, որի արդյունքում, հանրապետությունում ապահովվել է կայուն անասնահամաճարակային վիճակ:

Հանրապետության անասնապահության զարգացման համար առանձնակի կարևորվում է «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագիրը, որն ընդգրկում է հանրապետության՝ Արագածոտնի, Լոռու, Շիրակի, Տավուշի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի գյուղական համայնքները, որտեղ բնակչության հիմնական զբաղմունքն անասնապահությունն է:

Ծրագրի նպատակն է՝ աջակցել անասնապահական ուղղվածություն ունեցող բարձր լեռնային և սահմանամերձ համայնքներին՝ հեռագնա արտոների անցանելիության ապահովման, ջրարբիացման, դեզրադացված արտոների վերականգնման, ինչպես նաև կաթի ընդունման և վերամշակման կարողությունների ստեղծման, նորարարական տեխնոլոգիաների ներդրման, անասնաբուժական և տոհմային աշխատանքների բարելավման և այլ միջոցներով:

Ծրագրով նախատեսված 55 համայնքի փոխարեն, տնտեսված միջոցների հաշվին, աշխատանքներն իրականացվել են 91 համայնքում: Ծրագրում ընդգրկվածների թիվը նշված համայնքներում կազմում է 160.0 հազ. մարդ կամ 40.0 հազ. ընտանիք: Ծրագրի շրջանակներում արդեն ջրարբիացվել է շուրջ 250.0 հազ. հա արոտ՝ հանրապետության արոտների շուրջ 25 %-ը: 91 համայնքներում ձևավորվել են «Համայնքի արոտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներ:

**Ստեղծված կոոպերատիվների գործունեությունը բարելավելու, դրանց կարողությունները հզորացնելու համար կոոպերատիվների համար իրականացվում է տարբեր բնույթի աջակցություն, այդ թվում՝**

- տրամադրվել է 550 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, որից՝ 124 անիվավոր տրակտոր,
  - կառուցվել է շուրջ 165 կմ ջրագիծ, տեղադրվել է 204 խմոց,
  - 49000 քառ. մետր տարածության վրա կատարվել են արոտների ճանապարհների անցանելիության ապահովման աշխատանքներ,
  - հեռագնա արոտավայրերում կառուցվել են 8050 քառ. մետր ընդհանուր մակերեսով 12 փարախ, անասնապահի 12 տնակ, շահագործման են հանձնվել 2 անասնաբուժական սպասարկման կենտրոններ:
- Ծրագրի իրականացման արդյունքում՝ ընդգրկված համայնքներում, միջին ժամկետում.**
- մթերատվությունը բարձրացել է 20-25.0 %-ով,
  - ավելացել են անասնազիլաքանակը և անասնապահական տնտեսությունների եկամուտները:



Հաշվի առնելով ծրագրի դրական արդյունքները՝ 2015 թվականի երկրորդ եռամսյակից մեկնարկել է «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» երկրորդ ծրագիրը, որը նախատեսվում է ավարտել 2019 թվականին:

Նախորդ ծրագրում ներառված 6 մարզերին ավելացել են նաև Վայոց ձորի և Տավուշի մարզերը: Շուրջ 100 համայնքում իրականացվելու են անասնապահության զարգացմանն ուղղված ծրագրեր: Մասնավորապես, բոլոր համայնքներում նախատեսվում է հիմնադրել արոտագործողների կոոպերատիվներ (2015թ. արդեն իսկ ձևավորվել է 30 կոոպերատիվ), տրամադրել անհրաժեշտ գյուղատնտեսական տեխնիկա՝ շուրջ 800 միավոր, այդ թվում՝ 170 միավոր տրակտոր, արոտավայրերում կառուցել ջրարբիացման համակարգեր (նախնական հաշվարկներով՝ նախատեսվում է ջրարբիացնել շուրջ 160 հազ. հա արոտ, կառուցել 240 կմ ջրագիծ, տեղակայել 290 խմոց), աջակցել կոոպերատիվներին՝ գյուղատնտեսական կենդանիների տոհմային հատկանիշների բարելավման գործում, բարելավել արոտավայրեր տանող ճանապարհները, աջակցել կոոպերատիվներին՝ կաթի հավաքման և վերամշակման կետերի հիմնման աշխատանքներում: Ծրագրի շրջանակներում իրականացվելու են նաև արժեշտային զարգացմանն ուղղված ծրագրեր, որոնք կնպաստեն գյուղատնտեսական մթերքների արտադրության, վերամշակման, փաթեթավորման և իրացման խնդիրների լուծմանը: Նշվածի հետ մեկտեղ, գյուղական համայնքներում իրականացվում են նաև՝ «Բույսերի պաշտպանության», «Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների», «Գյուղական խորհրդատվական ծառայությունների» և այլ ծրագրեր:

Ներկայումս գյուղատնտեսությունում կայունության փուլին բնորոշ իրավիճակ է, և մեր առաջիկա խնդիրն է՝ զարգացման փուլին անցումը, որը հնարավոր է համարվում գյուղատնտեսությունում և վերամշակող արդյունաբերությունում նորագույն տեխնոլոգիաների ներդրման ծրագրերի կենսագործման շնորհիվ:

**Առաջիկա տարիներին՝ որպես առաջնահերթ խնդիրներ, մենք դիտարկում ենք գյուղատնտեսության ինտենսիվ զարգացումը՝ արդյունաբերական հիմքի վրա: Ահա այն ուղղությունները որոնց վրա առավել ուշադրություն ենք դարձնելու՝**

- կոոպերատիվների ստեղծում,
- ինտենսիվ պտղատու այգիների հիմնում,
- խաղողագործության զարգացում, սեղանի սորտերի ինտենսիվ այգիների հիմնում,
- կաթիլային ոռոգման համակարգի ներդրում,
- ժամանակակից ջերմոցային տնտեսությունների հիմնում,
- վերամշակող ճյուղում նոր տեխնոլոգիաների ներդրում և տեսականու ընդլայնում,
- անասնաբուժության տոհմային գործի բարելավում և մթերատվության բարձրացում,
- օրգանական գյուղատնտեսության զարգացում,
- ագրոտուրիզմի զարգացում:

Այս ուղղությամբ միջազգային և այլ կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքում, իրականացվում են միջոցառումներ, ուղղված արդիական տեխնոլոգիաների, մասնավորապես՝ կաթիլային ոռոգման, կարկտապաշտպան ցանցաշերտերի ներդրմանը, հանրապետությունում այդ տեխնոլոգիական սարքավորումների արտադրության կազմակերպմանը, ջերմատնային տնտեսությունում և ձկնաբուծությունում ռեսուրսախնայող տեխնոլոգիաների կիրառմանը: Միայն 2015 թվականին հիմնվել է նորագույն տեխ-

նոլոգիաներով հագեցած շուրջ 50 հեկտար ջերմատնային տնտեսություն: Արդիական տեխնոլոգիաներն իրենց կիրառությունն են ունենում այգեգործությունում, մասնավորապես՝ ընթացիկ տարում 300 հեկտարի վրա հիմնվել է ոռոգման և այլ ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած պտղատու ինտենսիվ այգիներ: Այս գործընթացը շարունակվում է:

Եվրասիական տնտեսական միությանն անդամակցությունը հեռանկարներ է բացում անդամ երկրների համար՝ միմյանց շուկաներ մուտք գործելու, երրորդ երկրների նկատմամբ մրցակցային առավելություններ ապահովելու առումով: Այս ուղղությամբ ներկայումս էական դրական տեղաշարժեր են գրանցվել հատկապես թարմ պտուղ-բանջարեղենի արտահանման գործընթացում: Այսօրվա դրությամբ, արտահանման ծավալները գերազանցել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը՝ շուրջ 47 %-ով, բոլոր նախադրյալները կան արտահանման ծավալները կրկնապատկելու համար:

2015թ. մեկնարկել է Եվրամիության արևելյան համագործակցության «Գյուղի և գյուղատնտեսության զարգացման» ծրագիրը, որի կարևորագույն բաղկացուցիչներից է՝ կոոպերացիայի խթանումը և գյուղատնտեսությունում նորագույն տեխնոլոգիաների ներդրումը:

Գյուղատնտեսությունում գրանցված դրական տեղաշարժերը որոշակիորեն արդյունք են նաև ոլորտի նկատմամբ վերջին տարիներին կիրառվող հարկային բարենպաստ քաղաքականության: Մասնավորապես, գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղված հարկատուներն ազատված են եկամտային հարկից և շահութահարկից: Գյուղատնտեսական ծագման մի շարք արտադրատեսակների, գյուղատնտեսության մեջ օգտագործվող կարևորագույն ռեսուրսների՝ տոհմային կենդանիների, սերմացուների, տնկանյութի, տնկիների, պարարտանյութերի, թունաքիմիկատների, գյուղատնտեսական տեխնիկայի, այդ թվում՝ տրակտորների և կոմբայնների, ինչպես նաև ջերմոցային կոնստրուկցիաների, ջերմատնային արտադրությունում օգտագործվող հիմնական նյութերի ներմուծման ազատված է ավելացված արժեքի հարկից: Իսկ մի շարք կարևորագույն ռեսուրսների իրացումը (ներքին շրջանառությունը) նույնպես ազատված է ավելացված արժեքի հարկի վճարումից:

Գյուղական բնակավայրերում տնտեսության աշխուժացմանը և սոցիալական վիճակի բարելավմանը կնպաստի նաև «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից



ազատելու մասին» և «Սահմանամերձ համայնքների սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները:

Հանրապետությունում գյուղատնտեսության զարգացման բարենպաստ պայմանները, ստացվող գյուղատնտեսական մթերքների յուրահատկությունը և որակական բարձր հատկանիշները, ինչպես նաև վարվող պետական քաղաքականությունը վերջին տարիներին հանգեցրել են ոլորտում ներդրումների աշխուժացման:

Եզրափակելով՝ հարկ եմ համարում նշել, որ, հիշատակվածի հետ մեկտեղ, գյուղատնտեսությունում դեռևս առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնք իրենց լուծումը պետք է ստանան իրականացվող պետական աջակցության, պետություն-մասնավոր հատված և միջազգային կազմակերպությունների համագործակցության ծրագրերի իրականացման արդյունքում:

«Գյուղատնտեսության նախարարի ելույթից»



ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՅՈՒՄ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԿ, ԱՅՍՕՐ ԵՎ ՎԱՂԸ

Մեկ ու կես տասնամյակ առաջ, երբ ագրարային ոլորտում հնարավորություն կար խորհրդատվության զարգացումն ամերիկյան տարբերակով տանել, մտավախություն առաջացավ, որ դրա համար դժվար կլինի միջոցներ հայթայթել և վճարել ուղղել այն դեպի այսպես կոչված հիբրիդային տարբերակ, որն էլ մեզ բերեց այնտեղ, ուր հիմա հասել ենք: Սակայն կյանքը երբեք կանգ չի առնում և հիմա պետք է նկատել այն հնարավոր ուղիները, որոնք վաղը կարող են կազմել գյուղատնտեսական խորհրդատվության տարբերակներն ու բովանդակությունը:

Առանձին հարցերի պատասխանը շահագրգիռ հողագործը կամ անասնաբույժը կարող է գտնել մասնագիտական գրքերում կամ համացանցում: Բայց եթե պետք է ոչ թե առանձին ծառայած հարցի պատասխանը գտնել, այլ դրանց բազմությամբ առաջացած իրավիճակը գնահատել և լուծումներ գտնել, ապա առանց փորձառու խորհրդատուի՝ այն դժվար կլինի իրականացնել:



Աշխարհում տարբեր խնդիրների համար գոյություն ունեն տարբեր խորհրդատվական ծառայություններ՝ մուսկիցիպալ կառույցների կազմում գործող, գյուղացիական-ֆերմերական միություններին կից գործող, մասնավոր խորհրդատուներ կամ խորհրդատվական ընկերություններ: Շատ երկրներում այս բոլոր խնդիրները պետությունն է լուծում՝ անվճար կամ շատ մատչելի գներով ծառայություններ տրամադրելով: Վերջին տարիներին շատ արագ է զարգանում մասնավոր հիմունքներով գործող խորհրդատվությունը, որը թեպետ թանկ արժի, բայց շատ որակյալ է և պահանջված: Դրանց առավել հաճախ հանդիպող տեսակները բերված են աղյուսակում:

Վարձատրությունը, սովորաբար, իրականացվում է՝

Կառույցի տիպը	Խորհրդատվության ուղղությունը	Մասնագիտական պատրաստվածություն	Ֆինանսավորման աղբյուրը
պետական	արտադրության աջակցություն	բույսերի շրջանավարտներ, պետական ծառայողներ	պետական բյուջե (դաշնային կամ տարածաշրջանային)
կրթական կամ գիտական ձեռնարկությունների բազայի վրա	տեսական և գործնական, լրացուցիչ ծառայություններ	գիտական և դասախոսական կազմ՝ գործնական աշխատանքային փորձով	պետություն, սեփական միջոցներից ստացված շահույթից
ֆերմերային կազմակերպություններ, խորհրդատվական ծառայությունների մատուցում	գործնական խնդիրներ	հնարավոր է առանց մասնագիտական կրթության	ստացված շահույթից
առաջող ընկերություններ	մարկետինգային բնույթի, տեսական հարցեր	տարբեր	ստացված շահույթից
մասնավոր խորհրդատվական ընկերություններ	տեսական, գործնական հարցեր, լրացուցիչ ծառայություններ	պրոֆիլային փորձառու մասնագետներ	ստացված շահույթից

ըստ ծախսված ժամանակի կամ ստացված արդյունքի՝ համաձայն որոշակի տարիֆային սանդղակի: Ընդ որում, վճարումը տեղի է ունենում անգամ այն դեպքում, երբ խորհրդատուն առաջարկում է հրաժարվել որևէ սցենարից կամ ծրագրից: Վճարումը կարող է լինել կատարված գործարքի տոկոսի ձևով և պարզ է, որ այս դեպքում տարիֆը կամ ծախսված ժամանակը նշանակություն չունեն:

Խորհրդատուի ծառայությունից օգտվում է ոչ միայն գյուղատնտեսական մթերք արտադրողը, այլև՝ տեխնիկա արտադրողն ու վաճառողը, կերերի և բույսերի պաշտպանության արտադրողները, բանկերը, ապահովագրական ընկերությունները, ընդ որում՝ խորհրդատվական ծառայությունների գինը կարելի է թողնել ինքնարժեքի մեջ:

Խորհրդատուին ընտրելուց հետո, նրա առջև պետք է հստակ դրվեն խնդիրը և դրա կատարման պայմաններն ու պահանջները, որոնք բերելու են սպասվող արդյունքին: Լավ խորհրդատուն առաջին հերթին երևում է իր տված հարցերից, որը ցույց կտա, թե որքանով է նա ըմբռնում խնդիրը: Նաև կարևոր է, թե նա ընդամենը «դաս է տալիս», թե պատրաստ է հանդես գալ որպես գործընկեր: Բայց որքան էլ նա որպես մարզիչ կամ նավավար հանդես գա, պատասխանատվության ձեր մասը նա իր վրա վերցնել չի կարող. «Նավապետը» մտնում է գյուղմթերք արտադրողը:



ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԴՐԱԿՏԻԿԱՆ ԳԵՐՄԱՆԱՅՈՒՄ

Ուսանողների և շրջանավարտների համար պրակտիկական և ստաժավորումը արտադրությունում կամ ժամանակակից ֆերմերական տնտեսությունում կարող է տևել 4, 6 կամ 12 ամիս, և ուշադրությունը հիմնականում հատկացվում է գործնական փորձի ձեռք բերման և կատարելագործման հետևյալ կոնկրետ գործառնություններում՝ կերերի կուտակում, վար, գոմաղբի հեռացում, տեխնիկայի բնագավառում՝ կոնվեյերային տարբեր միջոցների տիրապետում, տեխնիկայի սերվիսային ծառայություն, կթի իրականացման սրահ, սպասարկում և հնարավոր վերանորոգումներ: Որակավորման բարձրացման կուրսերը կարող են տևել 2-12 շաբաթ, որտեղ արտադրական ոլորտի աշխատողները կարող են ավելացնել իրենց հմտությունները, ինչը կհաստատվի համապատասխան հավաստագրով, օրինակ՝ կաթնային ֆերմայի մենեջերի, խոշոր եղջերավորների եղջրատման և սմբակների խնամքին տիրապետողի:

Եվ վերջապես, 6-10 օր տևողությամբ՝ պետական և կրթական ձեռնարկությունների ներկայացուցիչների համար իրականացվող մասնագիտական կատարելագործման ծրագրեր, որտեղ նրանք ծանոթանում են իրենց բնագավառների նորարարական նվաճումներին, ինչն էլ իրականացվում է այցելությունների, սեմինարների միջոցով՝ ընկերությունների բարձրաստիճան պաշտոնյաների և փորձառու խորհրդատուների հետ՝ շփումների ժամանակ: Այստեղ արդեն կարևոր է ոչ թե հավաստագիրը, այլ ստացած հմտությունները, որոնք այլ տեղ դժվար կլինեն ձեռք բերել: Նման շփումներից հետո մասնագետն ավելի վարժ է կարողանում կողմնորոշվել և որոշում կայացնել, կիրառել թանկարժեք տեխնիկա, ներդնել արդյունավետ

տեխնոլոգիաներ:

Այլ երկրների ուսանողների համար, հատկապես եթե վերջիններս ուզում են նաև լեզու սովորել կամ կատարելագործվել, գոյություն ունեն ուսանողների փոխանակման LOGO և APOLLO ծրագրեր: Վերջինս աշխատում է ՌԴ, Ուկրաինայի և Բելառուսի բուհերի գյուղատնտեսական, կենսաբանական, երկրաբանական և աշխարհագրական մասնագիտությունների սեզմենտում՝ պատրաստելով մասնագետներ՝ Էկոլոգիայի, գյուղատնտեսության և համայնքների զարգացման բնագավառում (www.apollo-online.de.), LOGO-ն՝ աշխատանք տանելով Ուկրաինայի, Վրաստանի և ԱՊՅ երկրների հետ (www.logo-ev.de.):

Ինչ վերաբերում է արտադրությունում զբաղվածներին, որոնք նույնպես կցանկանային բարձրացնել իրենց պատրաստվածության մակարդակը, դրանք կարող են դիմել RUSTICUS ընկերության նոր ծրագրերին (www.rusticus-agrar.de), որտեղ նույնպես նախատեսված է անվճար ապրուստն ու սնունդը ֆերմերի ընտանիքում: Տևողությունը կարող է կազմել 2 շաբաթից մինչև 3 ամիս, որի ընթացքում, գործնական ուսուցման հետ, կարելի է ձեռք բերել տեսական գիտելիքներ ընտրված թեմաներով: Ընդ որում, լեզվի հմտությունը պարտադիր չէ, որովհետև ծրագիրը, կամավորների միջոցով, ապահովում է նաև թարգմանությունը:

ԿՈՈՊԵՐԱՅԻՆ

ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆԸ՝ ՀԱՄԱԽՄԲՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԸ Է

ՕԲՄՖԱՄ-ի և Բի Էս Սի բիզնեսի աջակցման կենտրոնի օժանդակությամբ, 2012 թ. Վայոց ձորի մարզի Գունք համայնքում հիմնադրվել է կանանց կոոպերատիվ, նրանց տրամադրվել է արևային փոքրածավալ չորանոց: Միաժամանակ կառուցվել և կոոպերատիվի շահագործմանն են հանձնվել ստոնարանային և ռոտոման կաթիլային համակարգով ջերմոցային տնտեսություններ:

ՕԲՄՖԱՄ-ն առաջինն էր, որ 1998 թ.-ին օգնության ձեռք մեկնեց փախստաբնակ, սահմանամերձ Գունք համայնքին՝ վերանորոգելով գյուղի բուժկետը և ներդնելով դեղամիջոցների անվճար տեղադրման շրջանառու ֆոնդ՝ համայնքի բնակիչների համար: ՕԲՄՖԱՄ-ի օժանդակությունը երկարաժամկետ է և ռազմավարական: Այսօր ՕԲՄՖԱՄ-ի սոցիալական ձեռնարկության այս մոդելը գրանցում է նշանակալի հաջողություններ, և ջերմոցային տնտեսու-



յան եկամտի մի մասը ուղղորդվում է համայնքում զարգացման ծրագրերի իրականացմանը: Ներկայումս կոոպերատիվի 37 կանայք, նախագահ Նունե Ավագյանի գլխավորությամբ, միջազգային և տեղական կազմակերպությունների հետ համատեղ, իրականացնում են համայնքի զարգացման բազմաթիվ ծրագրեր: «Գունք-ի հաջողության գրավականը՝ համայնքի անդամների համախմբվածությունն ու ներգրավվածությունն է, որի հիմքը դրվել է ՕԲՄՖԱՄ-ի կողմից», - նշում է համայնքի կոոպերատիվի նախագահ Նունե Ավագյանը:

Մեր հայրենիքը սկսվում է սահմանամերձ գյուղերից: Եթե գյուղերը կայացած ու ամուր են, ամուր է նաև մեր երկիրը: Դեռավոր, սահմանամերձ համայնքների զարգացումը ՕԲՄՖԱՄ-ի ծրագրերի անկյունաքարն է: «Մենք սատարում ենք մարդկանց, որ ի գորու լինեն սատարելու ուրիշներին», - սա է կարգախոսը, որով կազմակերպությունն առաջնորդվում է Դայաստանում՝ իր գործունեության 21 տարիների ընթացքում:

Գունքը ՕԲՄՖԱՄ-ի շահառու այն համայնքներից է, որի հաջողության օրինակը փաստում է, որ ճիշտ տրամադրված օժանդակությունը ոչ միայն կարող է բարելավվել սահմանամերձ համայնքի տնտեսական վիճակը, այլև դառնալ կրկնօրինակելի մոդել՝ համայնքային զարգացման համապետական ռազմավարության համար:

Նեղի Սահակյան



ՎԵՐԱՍՇՆԱԿՈՒՄ

ԷԿՈԼՈԳԻԱՊԵՍ ՄԱՔՈՒՐ, ՀԻԳԻԵՆԱՅԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ

Մեղրի քաղաքը պետական սահմանով և մայր Արաքս գետով բաժանվում է Իրանի Իսլամական Հանրապետությունից: Քաղաքի բարեբեր հողերի և կիզիչ արևի շնորհիվ, այստեղ մրգերը ավելի համեղ և հյութառատ են: Մեղրին աշխարհին հայտնի է իր քաղցրահամ մրգերով՝ նուռ, դեղձ, ծիրան, թուզ, սերկևիլ, խաղող, ընկույզ, որոնց վերջին տարիներին ավելացել են նաև մերձարևադարձային տեսակները՝ արքայանարինջ ու կիվի: Այս անկրկնելի քաղցրահամ մրգերի մշակումը սկսվել էր դեռևս 1895 թ. երբ մասնավոր այգեգործը սեփական պահածոյացման տնտեսություն էր հիմնել, իսկ 1924 թ. ստեղծվեց կոոպերացիա՝ «Կարմիր Հոկտեմբեր» անվամբ:

Արաքս գետի ձախ ափին, 1930 թ.-ին հիմնադրվել է Մեղրու պահածոների գործարանը, 1996 թ.-ին այն սեփականաշնորհվել է՝ որպես բաց բաժնետիրական ընկերություն, իսկ 2011թ. վերափոխվել է ՓԲԸ, որը զբաղվում է մուրաբա-



ների, ջեմերի, հյութերի, կոմպոտների (օշարակների), ինչպես նաև՝ բանջարեղենային պահածոների արտադրությամբ: Շնորհիվ համեղ և բարձրորակ արտադրանքի, Մեղրու պահածոների գործարանը ճանաչում է գտել աշխարհի շատ երկրներում, մասնակցել է գանազան ցուցահանդեսների, արժանացել պատվոգրերի: Էկոլոգիապես մաքուր, բարձրորակ, թարմ հումքից արտադրված պահածոները յուրահատուկ են իրենց համային, գուևային հատկանիշներով՝ հագեցած վիտամիններով:

1987թ. Մեղրու պահածոների գործարանի տնօրեն է նշանակվել Գրիշա Գրիգորյանը: Ավարտել է Հայկական Գյուղատնտեսական ինստիտուտի գյուղատնտեսության մեքենայացում բաժինը, տարիների ընթացքում ձեռք բերած մասնագիտական փորձն ու գիտելիքները մինչ օրս ներ է դնում գործարանի զարգացման գործընթացի համար:

Այստեղ արտադրված արտադրանքը սպառվում է Հայաստանի Հանրապետությունում և արտահանվում՝ ՌԴ, Ուկրաինա, Բելգիա, Կանադա և ԱՄՆ: Օգտագործվող հումքը՝ մրգեր, բանջարեղեններ, գործարանի տնօրինությունը ձեռք է բերում հիմնականում Մեղրու, ինչպես նաև՝ ՀՀ-ի և ԼՂՀ-ի տարածաշրջաններից:

«Մեղրու պահածոների գործարան» ՓԲԸ-ն 2013 թ. ստացել է սննդամթերքի անվտանգության կառավարման համակարգի ISO 22000:2005 և HACCP միջազգային համապատասխանության սերտիֆիկատներ: Արտադրանքը թողարկվում է գործող համակարգի պահանջներին համապատասխան:

Արտադրանքի որոշ ցուցանիշներ ստուգվում են գործարանի լաբորատորիայում, իսկ մանրէաբանական ցուցանիշները՝ «Ստանդարտների ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ում:

2014թ. ընկերության արտադրատեսակները համալրվել են նոր տեսակակներով, տնօրինությունը չի բացառում, որ 2015 թ. նույնպես կլինեն լրացումներ մրգային և բանջարեղենային պահածոների նոր տեսակակներով: Գործարանի առաջնային խնդիրն է՝ ստանալ որակի չափանիշներին և հիգիենայի պահանջներին համապատասխանող արտադրանք:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

ԴԱՐԵՐ ԱՌԱՋ ՀԻՄՆԱԴԻՎԱԾ ԳՅՈՒՂԸ

Գեղարքունիքի մարզի Գանձակ համայնքը հիմնադրվել է 1928 թվականին: Առաջին բնակիչները եկել են Արևմտյան Հայաստանի Բայազետ և Ալաշկերտ գավառներից: Գյուղի կենտրոնում 9-րդ դարից կանգուն մնացած սբ. Գևորգ եկեղեցին և 5-րդ դարի սբ. Աստվածածին մատուռը վկայում են, որ գյուղն ավելի վաղ ժամանակաշրջանների պատմություն ունի:

Համայնքի գյուղատնտեսական նշանակության հողերն այսօր կազմում են 3401 հա. այն իր մեջ ընդգրկում է 919 հա վարելահողեր, 246 հա խոտհարք, 1450 հա արոտավայր և 786 հա այլ հողատարածքներ: Բնակչության հիմնական մասը զբաղվում է բուսաբուծությամբ (հիմնական մշակաբույսերն են՝ կարտոֆիլը և հացահատիկը) և անասնապահական մթերքների արտադրությամբ:

Համայնքն այսօր ղեկավարում է 2008 թ. ընտրված Վանիկ Հարությունյանը: Ծնվել և մեծացել է հայրենի գյուղում, ավարտել է Երևանի անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտը, աշխատել է գյուղի սովխոզում՝ որպես անասնապահական ֆերմայի վարիչ, որի լուծարումից հետո զբաղվել է գյուղացիական տնտեսությամբ:

Ներկայումս գյուղում բնակվում է 4350 բնակիչ: Համայնքում գործում են երկու միջնակարգ դպրոցներ, մանկապարտեզ, մշակույթի տուն, երաժշտական դպրոց, բուժամբուլատորիա, հանդիսությունների սրահ:

Վ. Հարությունյանի համայնքի ղեկավար ընտրվելուց հետո, աշխատանքային յոթ տարիների ընթացքում, կառավարության և համայնքապետարանի միջոցներով վերանորոգվել են համայնքի մշակույթի տունը, մանկապարտեզը, հորատվել է ոռոգման խորքային հոր, որոշակի հատվածներում բետոնապատվել և գաբիոնապատվել է գյուղամիջյան սելավատարը, մշակույթի տանն անցկացվել է լուկալ ջեռուցման համակարգ, ավարտվել են նաև Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հուշարձանի կառուցման աշխատանքները: Ներկայումս ընթացքի մեջ են գյուղի խմելու ջրի ամբողջ



ներքին ցանցի շինարարական աշխատանքները: Բնակչության ազատ ժամանակը նպատակային կազմակերպելու համար, մշակույթի տանը ստեղծվել են լավ պայմաններ, գործում են մարզական խմբակներ, հաճախակի կազմակերպվում են տարբեր միջոցառումներ: Երեխաները, պատանիներն ու երիտասարդները մարզվում են ֆուտբոլի, բասկետբոլի, վոլեյբոլի խաղահրապարակներում, իսկ համայնքապետարանն ապահովվել է համապատասխան մարզական գույքով:

Առաջիկայում այստեղ կիրականացվի համայնքի 3-րդ կարգի ոռոգման մայր առվի հիմնանորոգումն ու կոոպերացիայի ընդլայնումը:

Համայնքում ծառացած հրատապ լուծում պահանջող առաջնային խնդիրն է՝ կաթի վերամշակման արտադրամաս հիմնելը, որի համար կան շենքային բավարար պայմաններ, մնում է լուծել սարքավորումների ձեռք բերման խնդիրը:

Համայնքում ծառացած խնդիրների լուծումը դրական ազդեցություն կունենա բնակչության հոգսերը թեթևացնելու գործում:

ԿՐԹԱԿԱՆ


ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՀԱՄԱՐ

Ստեփանավանի քոլեջը 90 տարեկան է

Հանրապետության գյուղացիական տնտեսություններին, հիմնարկ-ձեռնարկություններին 90 տարի շարունակ գյուղատնտեսության ոլորտի մասնագետներով ապահովել է ՀՀ ԿԳ նախարարության «Ստեփանավանի պրոֆեսոր Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ը: 1925թ. հիմնադրված գյուղատնտեսական դպրոցի բազայի վրա՝ 1929 թ. ստեղծվել է անասնաբուժական-անասնաբուծական կրթիչիկում: Սկզբնական շրջանում կրթօջախը հիմնականում պատրաստել է անասնաբուծական ճյուղերի մասնագետներ, ովքեր աշխատել են մեր և հարևան հանրապետությունների գյուղատնտեսական ձեռնարկությունների միջին օղակներում, իսկ 1965թ. գործել է որպես սովխոզբնիկում:

26 տարի առաջ տեխնիկումի ղեկավարման աշխատանքները վստահվել է Սամվել Հունանյանին, ով մինչ օրս բարեխղճորեն իրականացնում է տնօրենի պարտականությունները:

Ս. Հունանյանն ավարտել է Գյուղատնտեսական ինստիտուտի տնտեսագիտական ֆակուլտետը, ստացել գյուղատնտեսական արտադրության տնտեսագետի որակավորում: Աշխատանքի է անցել Չոզվետ սովխոզ-տեխնիկումում՝ որպես տնտեսագետ, միաժամանակ՝ տնտեսագիտական



առարկաների ուսուցիչ: 1987-89թթ. աշխատել է Արամանիս սովխոզի տնօրեն:

Պարոն Հունանյանը գործնական այց է կատարել Ֆրանսիա, Գերմանիա, Իսրայել, Եգիպտոս՝ գյուղատնտեսական քոլեջների արտադրական և ուսումնական պրակտիկաների գործընթացն ուսումնասիրելու նպատակով ներկայումս արտասահմանյան երկրների քոլեջներն ունեն իրենց սեփական արտադրությունները: Տնօրենը կարծում է, որ մեզ մոտ ևս անհրաժեշտ է վերականգնել քոլեջի նախկին արտադրատարածքներն ու արտադրությունները, որոնք կնպաստեն ուսանողների պրակտիկ գիտելիքների հարստացմանը:

Տարբեր արտադրական կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի շնորհիվ, ուսանողները հնարավորություն ունեն իրենց ուսումնառությանը կապակցելու արևելահայկական անցկացնել «Լեջան» կաթ արտադրողների ասոցիացիայում, «Դուստր Մելանիա», «Քարախաչ», «Արտավազ», «Սերմնաբույծ» ՍՊ ընկերություններում:

Կրթության որակի բարձացման, փորձի փոխանակման նպատակով քոլեջը համագործակցում է՝ GTZ, TASIC, VORLD-VIZON, DVV international արտասահմանյան կազմակերպությունների հետ: Այս ուսումնական հաստատության առաջնային և լուծում պահանջող խնդիրն է՝ ուսումնական մասնաշեքի, ակումբի, մարզադահլիճի վերանորոգման աշխատանքները: Վերջերս լրացավ քոլեջի տնօրեն Սամվել Հունանյանի ծննդյան 60 ամյակը: Շնորհավորում ենք նրան ծննդյան առթիվ, ցանկանում աշխատանքային կորով, քաջաողջություն, անձնական երջանկություն:

Էջի նյութերը՝



ՄԱՍՆԱԳԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՊԱՏՎԱՍՏՎԱԾ ՍԱԾԻԼՆԵՐԸ ԲԱՐՁՐԱՅՆՈՒՄ ԵՆ ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Պատվաստումը բույսերի բազմացման եղանակներից է, որը հնարավորություն է տալիս ստանալ միջավայրի անբարենպաստ պայմանների, հիվանդությունների ու վնասատուների նկատմամբ դիմացկուն (հատկապես՝ նեմատոդակայուն), հզոր արմատային համակարգով սածիլներ, որոնց մշակությունը նպաստում է բերքատվության բարձրացմանը, ոչնչացնելու նվազեցմանը, բարձր շահութաբերության ապահովմանը: Ժամանակակից ջերմատներում հիմնականում մշակվում են լոլիկի և վարունգի պատվաստված սածիլներ:

Որպես պատվաստակալ՝ լոլիկի համար օգտագործվում է հոլանդական «Սեմինիս» ֆիրմայի Մաքսիֆորդ հիբրիդը: Իսկ վարունգի համար օգտագործվում են հզոր արմատային համակարգ ունեցող դրումի սորտերը: Պատվաստակալի և պատվաստացուի սածիլներն աճեցվում են՝ համաձայն սածիլների մշակության ընդունված տեխնոլոգիայի:

Պատվաստումն արդյունավետ իրականացնելու նպատակով, պատվաստակալների ստացման համար սերմերի ցանքն անհրաժեշտ է կատարել մեկ շաբաթ ավելի վաղ, քան պատվաստացուներինը: Կախված այն հանգամանքից, թե սածիլները որտեղ են տեղափոխվելու, պատվաստման աշխատանքներն իրականացնում են սածիլների 2-3 տերևի փուլում, երբ բույսերն ունեն 4-5 սմ բարձրություն և ցողունի տրամագիծը 0,16-0,20 սմ է (բնահողում մշակելու համար) կամ անմիջապես շաքիլատերևների տակից (հիդրոպոնիկ եղանակով մշակելու դեպքում):

Կարելի է կիրառել պատվաստման մի քանի ձևեր, դրանք են՝ տես նկ.1

ա) պատվաստացուն տեղադրել պատվաստակալի ցողունի ճեղքվածքում,

բ) պատվաստակալը տեղադրել պատվաստացուի ցողունի ճեղքվածքում,

գ) պատվաստացուի ծիլը տեղադրել պատվաստակալի ցողունի ճեղքվածքում և այլն:

Հիմնականում պատվաստումն իրականացվում է Եվրոպայում առավել տարածված «ճապոնական մեթոդով»:

Սրիչով, 45° թեքությամբ, կտրվում են պատվաստակալի և պատվաստացուի ցողունները ու հատուկ ամրակներով սեղմում իրար (նկ.2): Կարևոր է, որ պատվաստակալը և պատվաստացուն ու-

աճն աննկատ է: Այդ օրերին անհրաժեշտ է կատարել թույլ և թառամած բույսերի խոտանում: Չորրորդ օրը սկսվում է հյուսվածքների միաձուլումը, որի ընթացքում բույսերին անհրաժեշտ է ապահովել



Նկ.1 Պատվաստման տարբեր եղանակներ

նենան նույն հաստությունը, կտրվեն նույն թեքությամբ:

Պետք է սրիչները պարբերաբար ախտահանել և պատվաստման գործողությունն իրականացնել շատ արագ,

թարմ օդով: Հյուսվածքները 5-7 օր հետո լիովին սերտանում են: Այդ ընթացքում անհրաժեշտ է կատարել օդափոխություն և խոնավությունն աստիճանաբար իջեցնել: 8-9 օր հետո սածիլը լիովին պատրաստ է լինում տնկման համար: Այս մեթոդի կիրառման դեպքում կաշողականությունը կազմում է շուրջ 90%:

Պատվաստված սածիլների ստացման արդյունավետությունը բարձր է, երբ բոլոր աշխատանքներն իրականացվում են հատուկ սածիլանոցներում, որտեղ բույսի

որպեսզի հյուսվածքները չչորանան: Ախտահանել կարելի է սովորական աղաջրով: Խորհուրդ է տրվում պատվաստացուն նախապես ընկղմել շաքարի հազեցած լուծույթի մեջ և անմիջապես կատարել պատվաստը:

Պատվաստելուց հետո անհրաժեշտ է ապահովել օպտիմալ պայմաններ՝ պատվաստի կաշողականությունը բարձրացնելու համար: Պատվաստները տեղադրել թաղանթապատ տարածքում: Պատվաստված սածիլներն արևի ուղիղ ճառագայթներից պաշտպանելու համար, օգտագործել կրկնակի թաղանթ, ապահովել օդի 24-26° C ջերմություն և 90-96% հարաբերական խոնավություն: Յուրաքանչյուր երեք ժամը մեկ անհրաժեշտ է ստուգել բույսերի վիճակը:

Պատվաստելուց հետո՝ առաջին 3 օրերին, սածիլի

աճման և զարգացման յուրաքանչյուր փուլի համար հնարավոր է ապահովել անհրաժեշտ պայմաններ:

Գայանե Մարտիրոսյան, ԲԲՏՄԳԿ, կենսաբանական գիտությունների թեկնածու

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է...

ԱՌՈՂՋԱՐԱՐ ՏԱՆՁԸ

Առհասարակ առավել առողջարար են համարվում տանձի բուրդումնավեր տեսակները: Իսկ Հայաստանում աճող տեսակներն անկրկնելի են իրենց համով և բույրով: Տանձենին, սովորաբար, ծաղկում է մայիսին, ինչպես որ վարդագլխերից շաքերը: Տարբերվում են ամառային, աշնանային և ձմեռային տեսակները: Աշնանային առավել բուրդումնավեր և համեղ տեսակն է, և պահպանվում է 2-3 ամիս: Տանձն իր մեջ պարունակում է շաքարներ, կարոտին (ենթավիտամին A), PP, B, C, P, եթերային յուղեր, յոդ, երկաթ, դաբաղանյութեր (0,3%), բջջանյութ (0,5 %):

Միզապարկի բորբոքման և երիկամային հիվանդությունների դեպքում առավել օգտակար են վայրի տանձենու պտուղները, որոնք չեն զիջում արջախաղողին (մաթուզենի) և հապալասենուն: Այդ տեսակի պտուղները հարուստ են վիտամին P-ով և դաբաղանյութերով (մոտ 20 %): Տանձի թթվաշաքար և պինդ տեսակներն ամրապնդում, կազդուրում են լյարդն ու ստամոքսը, զրգռում ախորժակը, սակայն հակացուցված են տարեցների և դյուրագրգիռ մարդկանց համար: Այս պտուղը բարեարար ազդեցություն ունի օրգանիզմի վրա, հրաշալի հակադեպրեսանտ և երիտասարդացնող հատկություններ ունի: Տանձի պտղամսում պարունակվող ասկորբինաթթուն արագացնում է վերքերի ապաքինման ընթացքը, իսկ տանձենու տերևներից պատրաստվում է թուրմ, որն օգտագործվում է սնկային և մաշկային



հիվանդությունների դեպքում: Թուրմը պատրաստվում է հետետևյալ կերպ. մեկ բաժակ տանձի մատղաշ (կամ չորացրած կես բաժակ) տերևների վրա լցնել կես լիտր եռջուր, 2-3 րոպե պահել թույլ կրակի վրա, ապա՝ քամել: Որպես թրջոց՝ դնել մաշկի վնասված մասերին:

Բերանի եզերքի ճաքերի դեպքում ևս կարող եք տանձահյութ քսել: Գլխապտույտի դեպքում եփել տանձն այնքան, որպեսզի փափկի, ապա եփուկով թրջոցներ դրեք ճակատին: Ավիտամինոզի դեպքում՝ օրը 2-3 անգամ 100-ական գրամ տանձ ընդունեք: Տանձի սերմերն ունեն հակաճիճկային հատկություն, պարզապես պետք է ուտել միջուկը: Տանձն օգտակար է նաև շագանակագեղձի բորբոքման դեպքում: Թեև տանձը քիչ՝ մոտ 10 % պտղաշաքար (ֆրուկտոզա), բուսաշաքար (սախարոզա), խաղողաշաքար (գլյուկոզա) է պարունակում, այնուամենայնիվ, այն ավելի քաղցր է թվում, քան մյուս մրգերը, որովհետև համեմատաբար (օրինակ՝ խնձորի համեմատ) ավելի քիչ թթուներ է պարունակում:

Շաքարային դիաբետի դեպքում ազնվամորու, հոնի հյութերից բացի՝ խորհուրդ է տրվում նաև տանձի թարմ հյութը: Որպես դիետիկ սնունդ՝ կիրառվում է ոչ միայն դիաբետի դեպքում, այլև՝ որպես նիհարեցնող միջոց:

Տանձահյութն օգտագործվում է նաև սրտային, թոքային, ինֆեկցիոն հիվանդությունների դեպքում: Տանձի բոլոր տեսակներն էլ ունեն կապող ներգործություն: Տանձ կարելի է ուտել սնունդ ընդունելուց 30 րոպե հետո: Հակացուցումներ. տանձ ուտելուց հետո խորհուրդ չի տրվում միս ուտել՝ վերջինիս դժվարամարս լինելու պատճառով: Քաղցած վիճակում տանձ չուտել, տանձ ուտելուց հետո չի կարելի ջուր խմել:

Տանձի լիկոր

Տնային պայմաններում բուրդումայից տանձի տեսակներից կարելի է լիկոր պատրաստել: Տանձերը լավ լվանալ, խոշոր քերիչով անցկացնել և լցնել տարայի մեջ: Ավելացնել 1 լ օդի: Արևի տակ պահել 4-5 շաբաթ: Դուրս եկած հյութը քամել և վրան ավելացնել նախօրոք պատրաստած օշարակը (3-4 կգ շաքար և 3 բաժակ ջուր): Եվս մեկ շաբաթ պահել: Քամել, պատրաստի լիկորը լցնել շշերի մեջ և պահել օգտագործման համար: Օգտագործվում է բուժական նպատակով՝ որպես օրգանիզմի տոնուսը բարձրացնող միջոց:



### ՀԵՏԱԲՈՒԹՅՈՒՆ Է...

## ԱՐԵՎԻ ԾԱՂԻԿ

**Արևածաղիկը (լատ.՝ helianthus) բարդածաղկավորների ընտանիքին պատկանող միամյա, խաչածն փոշոտվող խոտաբույս է: Նրան այլ կերպ անվանում են արևելած ծաղիկ կամ արևերթիկ:**

Ծաղկաբույլը զամբյուղ է, գլուխը միշտ դեպի արևն ուղղված, կարծես փորձում է հասնել արևին, դեղնասուկեգույն է, ծաղկում է հուլիս-օգոստոս ամիսներին: Պտուղը կազմված է հաստ կեղևից և միջուկից՝ սպիտակ, սև, մոխրագույն, սպիտակ շերտերով: Սերմերից ստանում են ձեթ, որն օգտագործում են սննդի արդյունաբերության, օճառի, լաքերի-ներկերի արտադրության մեջ: Հայտնի է արևածաղիկի շուրջ 50 տեսակ: Միամյա արևածաղիկի հայրենիքը Հյուսիսային Ամերիկան է: Եվրոպացիներն առա-



ջին անգամ այս բույսը տեսել են մեքսիկական տարածքներում, երբ հայտնագործել են Ամերիկան: Հնագիտական պեղումները հաստատում են, որ հնդկացիներն այս բույսը մշակել են դեռևս 2000 տարի առաջ: Կան հնագիտական վկայություններ, որ ներկայիս Արիզոնա և Նյու-Մեքսիկո նահանգների տարածքում եղել են արևածաղիկի մշակության վայրեր: Որոշ հնագետներ, նույնիսկ, այն կարծիքի են, որ արևածաղիկի հացահատիկից վաղ են մշակել՝ ի պատիվ Արևի Աստվածության պաշտամունքի (հատկապես Մեքսիկայում և Պերուում):

Ծաղկի ոսկե արծանները, ինչպես նաև սերմը, տեղափոխվել են Եվրոպա: Գիտնական Պ.Մ. ժուկովսկին հաստատում է, որ բույսի առաջին սերմերը Եվրոպա են տեղափոխել իսպանացիները, և տնկել մադրիդյան այգիներում: Սկզբնական շրջանում բույսը մշակվել է որպես դեկորատիվ, երբեմն՝ նաև բժշկության մեջ, ավելի ուշ՝ որպես բանջարանոցային բույս: Ենթադրվում է, որ Իսպանիայից հետագայում անցել է Իտալիա, Ֆրանսիա, և արդեն 16-րդ դարում՝ Բելգիա, Անգլիա, Հոլանդիա, Շվեյցարիա և Գերմանիա: Գերմանիայում 18-րդ դարում արևածաղիկն օգտագործվել է որպես սուրճի փոխարինող, բայց դա երկար չի տևել: Արևածաղիկից ձեթ ստանալու գաղափարը պատկանում է անգլիացիներին՝ 1716թ., սակայն մասսայական արտադրություն առաջին անգամ կատարվել է Ռուսաստանում՝ Պետրոս 1-ի օրոք:

Ձեթի օգտագործումը կապված է Դմիտրի Բոկարևի անվան հետ, ով զբաղվում էր կտավատի և կանեփի սեր-

մերով ձեթի արտադրությամբ. նույնը փորձում է իրականացնել արևածաղիկի հետ: 1829թ. առաջին անգամ արևածաղիկի ձեթը նա ստացավ ձեթի խնոցիով: Շատ չանցած բացվեցին առաջին արտադրամասերը, իսկ 19-րդ դարի վերջին Ռուսաստանը սկսեց ձեթն արտահանել Միացյալ Նահանգներ և Կանադա: Հետո ԱՄՆ-ը դարձավ խոշոր արտահանողներից մեկը՝ Ռուսաստանից հետո: Ներկայումս արևածաղիկի և ձեթի արտադրությունը տարածված է ամբողջ աշխարհում: Հիմնական տարածաշրջաններն են՝ Արգենտինան, Ռումինիան, Թուրքիան, Իսպանիան, ԱՄՆ-ը, Ռուսաստանի Դաշնությունը:

### Արևածաղիկի մշակումը

ՀՀ-ում մշակվում է արևածաղիկի յուղատուն, հիմնականում՝ Գեղարքունիքի, Արագածոտնի մարզերում, անցրդի պայմաններում՝ որպես սիլոսային մշակաբույս: Ցանքի համար օգտագործվում են խոշոր սերմեր. ծլունակությունը պետք է լինի 96-100 %: Ցանքից առաջ անհրաժեշտ է սերմերը ախտահանել «Վիտավաքս» կոչվող պատրաստուկի 2-3 կգ/տ չափաքանակով: Անհրաժեշտ է ցանել վաղ գարնանը, ապրիլի սկզբին, շարային եղանակով: Ցանքից հետո, մոլախոտերի դեմ պայքարելու նպատակով, պետք է հերբիցիդով սրկել: Արևածաղիկի բարձր բերք ստանալու համար առավել կարևոր է ոռոգման ճիշտ կազմակերպումը: Ոռոգումը պետք է կազմակերպվի՝ հաշվի առնելով բույսի կենսաբանական առանձնահատկությունները: Արևածաղիկը զգայուն է պարարտանյութերի նկատմամբ: Պարարտանյութերը զգալի չափով բարձրացնում են արևածաղիկի սերմնապտղի բերքը և յուղի պարունակությունը, իսկ ազոտական պարարտանյութերը հաճախ իջեցնում են արևածաղիկի դիմացկունությունը ժանգի նկատմամբ: Գոմաղբը բոլոր պայմաններում բարձրացնում է արևածաղիկի բերքատվությունը: Արևածաղիկի ծիլերը լավ են դիմանում ուշ գարնանային սառնամանիքներին: Ուշ ցանքի դեպքում, թե սերմի, թե սիլոսային զանգվածի բերքը խիստ ընկնում է: Ցանքն ուշացնելիս, իջնում է նաև յուղի պարունակությունը և վատանում որակը:

### Արևածաղիկի օգտակար հատկությունները

Արևածաղիկով պատրաստված պատրաստուկները ախորժակ են բացում, կրճատում են մարմնի ջերմաստիճանը, ունեն մկանները հանգստացնելու հատկանիշ: Ծաղկի տերևներից պատրաստված թուրմն օգտագործվում է մալարիայից պաշտպանելու համար: Պատրաստում են թեյեր. բույսի տերևներից պատրաստում են թրջոցներ, որոնք բուժում են ուռուցքները, վերքերը, մոծակների և օձերի խայթոցները, իսկ բույսի արմատներն օգտագործվում են ունևտիզմի բուժման նկատառումներով: Թուրմը բուժում է սրտի հիվանդությունները, դեղնախտը, գրիպը, բրոնխիտը, սաստիկ հարբուխը, տենդը, բարձրացնում արյունատար անոթների առաձգականությունն ու օրգանիզմի դիմադրողականությունը, կանխում լյարդի ճարպակալումը: Թարմ սերմերն օգնում են ալերգիաների և ցանների ժամանակ:

**Թարգմանությունը՝ Լիլիթ Գասպարյանի**

### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՊՐՈՖ. Ա. ԶԱԼԱՆԹԱՐԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՈԼԵՁ» ՊՈԱԿ -Ը ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է՝**

**2015-2016 թթ. ուստարվա առկա բաժնի ընդունելություն հետևյալ մասնագիտություններով՝**

• **«Մենեջմենթ» - որակավորումը՝ մենեջեր ուսման տևողությունը՝** հիմնական ընդհանուր կրթությամբ՝ 3 տարի, միջնակարգ ընդհանուր կրթությամբ՝ 2 տարի, **տարեկան ուսման վարձի չափը՝ 65000 դրամ:**

• **«Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ» - որակավորումը՝ հաշվապահ** հիմնական ընդհանուր կրթությամբ՝ 3 տարի միջնակարգ ընդհանուր կրթությամբ՝ 2 տարի, **տարեկան ուսման վարձի չափը՝ 65000 դրամ:**

• **«Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» որակավորումը՝ տեխնիկ** հիմնական ընդհանուր կրթությամբ՝ 3 տարի 6 ամիս, միջնակարգ ընդհանուր կրթությամբ՝ 2 տարի 6 ամիս, **տարեկան ուսման վարձի չափը՝ 60.000դրամ:**

**Բոլոր մասնագիտությունների գծով հատկացված է յուրաքանչյուրին՝ հիմնական ընդհանուր կրթությամբ՝ 15 անվճար և 10 վճարովի տեղեր միջնակարգ ընդհանուր կրթությամբ՝ 3 անվճար և 17 վճարովի տեղ:**

Զույգը բարձր առաջադիմությամբ ավարտած շրջանավարտները ուսումը կշարունակեն «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի և Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Վանաձորի մասնաճյուղի համապատասխան մասնագիտության 2-րդ կամ 3-րդ կուրսերում, իսկ մնացած շրջանավարտները, անկախ գնահատականներից, «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի 23 մասնագիտությունների գծով՝ առանց ընդունելության քննությունների՝ առաջին կուրսում:

**Դիմորդների փաստաթղթերն ընդունվում են** մինչև օգոստոսի 25-ը:  
**Ընդունելության մրցույթը կիրականացվի** օգոստոսի 26-27-ը:

**Մանրամասն տեղեկությունների համար դիմել քոլեջ**

**Հասցեն՝ ք. Ստեփանավան, Երիտասարդական 47 Դեռախոս՝ 0256 2 -22-80**

### ԶԳՈՒՇԱՑՏԵՔ ԱՐԵՎԻՑ

**Անհիշելի ժամանակներից շատերը կարծում էին, որ արևի լույսը նպաստում է առողջությանը և լավ է արտաքին տեսքի համար:**

Դա ճիշտ է այն դեպքերում, երբ մարդն արևահարվելիս, պահպանում է որոշակի կանոններ: Եթե խախտվի սահմանը, ապա կարելի է մաշկի լուրջ այրվածքներ ստանալ: Մաշկը շատ լավ ընտելանում է արևի ճառագայթներին՝ հատկապես շարժման մեջ: Մի սկսեք արևահարվել կեսօրից հետո, երբ արևն առավել կիզիչ է, նախընտրելի է առավոտյան: Սկզբում կարելի է ոտքերն ու ձեռքերը արևահարել, այն էլ՝ 15-20 րոպե, այնուհետև՝ ամբողջությամբ, բայց դարձյալ 10 րոպեից ոչ ավելի: Գլուխը և աչքերը պահպանեք արևի ճառագայթներից: Արևի տակ մնալու ժամանակն ամեն օր ավելացրեք 3-5 րոպեով, բայց այնպես, որ ընդհանուր ժամանակը չգերազանցի մեկ ժամը: Ժամանակ առ ժամանակ անցկացրեք սովորում: Արևն ամենից շատ այրում է սարերում: Դա տեղի է ունենում այն պատճառով, որ օդն այնտեղ ավելի նոսր է: Արևի տակ լինելու ճիշտ կազմակերպումն ամրապն-



դում է առողջությունը, բարձրացնում է նյութափոխանակությունը, ավելացնում է արյան կարմիր գնդիկների արտադրությունը, ուժեղացնում է մաշկի մեջ վիտամին C-ի գոյացումը և նպաստում օրգանիզմի պաշտպանական ուժերի բարձրացմանը:

### ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑՆԵՐ

Ոմանք ավելի զգայուն են արևային ճառագայթման հանդեպ, որովհետև մաշկի մեղանիս պիգմենտի պակաս ունեն: Մեր օրգանիզմում արտադրվող այս նյութը մաշկին ու մազերին մուգ երանգ է հաղորդում: Մեղանիսն ունի նաև պաշտպանական գործառույթ. այն կանխում է ուլտրամանուշակագույն ճառա-

**ՀԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Ե**

**ԱԳՐԱԼՐԱՏՈՒԹՅՈՒՆ**

**թերթի**

**2015 թ. ԲԵԺԱՆՈՐԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

**«ԱԳՐՈՂԻՏՈՒԹՅՈՒՆ» ամսագրի**

1 փարվա գինը՝ 3960 դրամ	6 ամսականը՝ 1980 դրամ	1 համարինը՝ 120 դրամ
-------------------------	-----------------------	----------------------

1 փարվա գինը՝ 8100 դրամ	6 ամսականը՝ 4050 դրամ	1 համարինը՝ 1350 դրամ
-------------------------	-----------------------	-----------------------

**Բաժանորդագրությունը իրականացնում են՝** Գյուղատնտեսության աշակցության հանրապետական և մարզային կենտրոնները, «Հայփոստ», «Հայամուլ», «Պրես-Արտաշ» կազմակերպությունները

**ԱԳՐԱԼՐԱՏՈՒԹՅՈՒՆ**

**AGRONEWS**

Հասցեն՝ Երևան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80  
E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am

**ՀԻՄՆԱԳԻՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ**

ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն  
«Գյուղատնտեսության աշակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ

Տնօրեն **Ա. ՎԱՀԱՆՅԱՆ**

Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝ **Լ. ՇԱԽՆԱՋԱՐՅԱՆ**

Տպագրանակ՝ 1100  
2 տպագրական մամուլ  
գրանցման քիվ՝ 01 Մ 000226  
դասիչ՝ 69105  
պատվեր քիվ՝ 89  
ստորագրված է տպագրության 03.07.2015 թ.  
տպագրվում է ԳԱՀԿ տպարանում,  
Երևան, Մամիկոնյանց 39ա